ՏԵՂԵԿԱՏՈՒ NEWSLETTER

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ
ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk
Website: www.armenianschool.org.uk

Տեղեկատու N1, Ապրիլ, 2014

Յարգելի ծնողներ, բարեկամներ,

Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի կողմից բարի գալուստ եմ մաղթում:
Ձեզ ենք ներկայացնում այնքան սպասուած վարժարանի գարնանային տեղեկատուն: Ես ցանկանում եմ խորին շնորհակալութիւն յայտնել բոլոր այն ուսուցիչներին, ովքեր այնքան նուիրուածութեամբ աշխատել են այս տեղեկատուի ստեղծման համար:
Իւրաքանչիւր դպրոց ունի իր իւրայատուկ դէմքը, Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանում ստեղծել ենք բարեկամական, միմեանց նկատմամբ հոգ տանող միջավայր, որը նպաստում է մեր երեխաների կրթութեանը և զարգացմանը:
Վարժարանի որդեգրած կրթական ծրագիրը նպաստում է, որպէսզի մեր աշակերտները կարողանան հասնել իրենց կարողութիւնների առաւելագոյնին:
Մենք հպարտ ենք մեր Վաժարանի կրթական մակարդակով, իրենց գործին նուիրուած մեր ուսուցչուհիներով, հոգաբարձուներով, կրթական յանձնախմբով, ծնողական յանձնախմբով, որոնց շնորհիւ մեր Վարժարանը և աշակերտները հասնում են յաջողութիւնների:
Օգտվելով այս հնարաւորութիւնից Վարժարանի բոլոր բարերարներին, համագործակիցներին, բարեկամներին, դպրոցի աշխատակազմին, ծնողներին և աշակերտներին մէկ անգամ ևս շնորհակալութիւն եմ յայտնում:

Վստահ եմ, որ յաճոյքով կը կարդաք:
Եթէ կունենաք որևէ հարց կամ առաջարկ այս շրջաբերականի բովանդակութեան վերաբերեալ, առանց վարանելու ուղարկէք էլ նամակ՝

E-mail: armenianschool@hotmail.co.uk

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի հոգաբարձութիւնը, տնօրէնը և ուսուցչական կազմը իրենց ողջոյնի խօսքն են ուղղում բոլոր ծնողներին, աշակերտներին և նրանց, ովքեր հետաքրքրւում են Վարժարանի կեանքով և առօրեայով:

* * * * * * *

Մեծ սիրով ձեզ ենք ներկայացնում տեղեկութիւններ Վարժարանի գործունէութեան, ծրագրերի, տեղի ունեցած իրադարձութիւնների և գալիք միջոցառումների մասին:

Երրորդ եռամսեակի միջոցառումների ցանկը.

Վերամուտ	Ապրիլ 27
Մարզական օր	Մայիս 11
Նկարչական մրցոյթ	Մայիս 18
Կիսամեակի արձակուրդ	
Յունիսի 1	
Դաշտահանդէս	Յունիս 29
Տարեվերջի հանդէս	Յուլիս 13

Սիրով տեղեկացնում ենք, որ դպրոցն ունի առաջարկների արկղիկ: Դուք կարող էք գրաւոր ներկայացնել ձեր առաջարկներն ու դիտողութիւնները, որոնք կօգնեն մեզ մեր հետագայ գործունէութեան ընթացքում:

Կրթական ձեռնարկներ

Սուրբ Վարդանանց տօնը նշուեց փետրուարի 16-ին: Մեր աշակերտները ուսուցիչների օգնութեամբ պատրաստել էին գեղեցիկ ծրագիր, բարձր դասարանի աշակերտները շնորհաշատ դերասանուհի Ժ.ներսիսեանի ղեկավարութեամբ փոխանցեցին օրւայ խորհուրդը:

Մարտի 30-ին նշեցինք մայրերի տօնը աշակերտների գեղեցիկ ելոյթներով: Յատկապէս տպաւորիչ էր 9-րդ դասարանի աշակերտուհի Սևանա Բաբաեանի ելոյթը, նա կարդաց մօրը նւիրւած իր ստեղծագործութիւնը :

Մարտի 30-ին և ապրիլի 7-ին տեղի ունեցան աւարտական դասարանի աշակերտների աւարտական քննութիւնները, որոնք պատրաստել էին Վարժարանի կրթական յանձնախումբը:

Ապրիլի 24-ին Հայոց Ցեղասպանութեան 99-րդ տարելիցի առթիւ Բրիտանահայ Համայնքային Խորհրդի Ցեղասպանութեան Ճանաչման Յանձնախմբի կազմակերպւած յուշ երեկոյին մասնակցեցին մեր աշակերտներից Սևանա Բաբաեանը, Շահում Աւեյանը, Լևոն Մինասեանը, Սևան Ջոլոլեանը, Տիգրան Մինասեանը և դերասանուհի Ժ.ներսիսեանը:

Ի նպաստ աշակերտների կրօնական և հոգևոր դաստիարակութեանը պարբերաբար Վարժարան է այցելում Սրբ Սարգիս Եկեղեցւոյ հոգևոր հովիւ Տ. Շնորհք քհնյ. Բաղդասարեանը: Առաւօտեան հաւաքական աղօթքից և ամփոփ քարոզից յետոյ Տէր Հայրը այցելում է տարբեր դասարաններ և աշակերտներին մատչելի լեզւով ուսուցանում է եկեղեցական գիտելիքներ, հոգևոր երգեր և աղօթքներ:

Ծնողական յանձնախմբի ձեռնարկներ

Ընթացիկ կիսամեակի կարևոր իրադարձութիւններից էր փետրուարի 1-ին տեղի ունեցած ընդհանուր գիտելիքների մրցութիւնը:
Մեծագոյն շնորհակալութիւն կազմակերպիչներին՝ ծնողական հանձնախմբին, հոգաբարձուներին եւ բոլոր մասնակիցներին, որոնց շնորհիւ այս տարուայ շահոյթը կազմեց աւելի քան £1000.00:
Ծնողական յանձնախմբը մարտի 30-ին՝ մայրերի օրուայ և ապրիլի 6-ին Սուրբ Զատիկի՝ Սուրբ Յարութեան տօնի առթիւ Վարժարանում կազմակերպուեցին ճոխ նախաճաշ և տօնավաճառ:

Մարզական լուրեր

Վարժարանում տեղի ունեցան շախմատի նախընտրական խաղերը , յաղթողները կը մրցեն մայիսի 11-ին՝ Վարժարանի մարզական օրուայ ընթացքում:

Լուրեր

Մեր երախտագիտութեան խօսքն ենք յղում Տէր և Տիկ Ռաֆֆի և Ալիս Դանիէլեանին՝ Վարժարանի աշակերտներին Հայ եկեղեցական եւ ազգային ծեսերի գրքոյկի անգլերէն տարբերակը նուիրելու համար:

Գ. Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի ամբողջ կազմը՝ տնօրինութիւնը, հոգաբարձուները, խնամակալները, ուսուցչական կազմը և ծնողական յանձնախումբը խորը վշտով լսեցին պարոն Պարգև Քասարճեանի մահուան լուրը:
Պարոն Քասարճեանը մեր դպրոցում բոլորի կողմից շատ սիրուած էր, նա իր կեանքի ընթացքում բազմիցս այցելել է վարժարան և իր ներկայութեամբ քաջալերել վարժարանի աշխատանքները:
Անգնահատելի են Պարոն Քասարճեանի ազգանուէր գործունէութիւնը, նրա բարի գործերը թէ՝ հայրենիքում և թէ՝ Բրիտանահայ համայնքում, որտեղ նա յատուկ ուշադրութիւն էր դարձնում երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակութեանը:
Գ. Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը միշտ բարձր է գնահատել պարոն Պարգև Քասարճեանի շարունակական օգնութիւնը դպրոցին, քանի որ այս երկրի պայմաններում առանց նման բարերարների, դպրոցի աշխատանքները անհնարին է պատկերացնել:
Վարժարանը բարձր գնահատելով նրա վերաբերմունքը դպրոցի հանդէպ և նպատակ ունենալով յաւերժացնել նրա բարի յիշատակը, դպրոցում սահմանել ենք Պարգև Քասարճեան մրցանակ:
Վարժարանում նախակրթարանից մինչև աւարտական դասարանը բաժանել ենք 3 խմբերի, որոնք գիտելիքների և մարզական ոլորտում մրցում են միմեանց հետ ամբողջ տարուայ ընթացքում: Տարեվերջին յաղթող ճանաչուած խումբը ստանում է Պարգև Քասարճեան մրցանակը:
Վարժարանի ամբողջ կազմի կողմից նորից խորին ցաւակցութիւններ ենք յայտնում պարոն Պարգև Քասարճեանի ընտանիքին:

* * * * * * * * * * * * * * *